ԶՈՐԱՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ փաստաբանների պալատի անդամ,
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական
և քրեադատավարական իրավունքի ամբիոնի հայցորդ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՊԱՑՈՒՅՑԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հեռահաղորդակցման գործընթացում առանցքային նշանակություն ունեն էլեկտրոնային փաստաթղթերը: Սույն գիտական աշխատության սահմաններում կքննարկվի քրեադատավարական ապացույցի տեսակների համակարգում էլեկտրոնային փաստաթղթի տեղին վերաբերող խնդիրը: Աշխատանքի ծավալի մեջ ներառված է նաև քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային փաստաթղթի և ավանդական փաստաթղթի օգտագործման հնարավորությունների համեմատական վերլուծություն:

Հիմնաբառեր *– էլեկտրոնային փաստաթուղթ, արձանագրում, իրեղեն ապացույց, այլ փաստաթուղթ:*

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մատչելիությունը նպաստել է համակարգչային տեխնիկայի լայն տարածմանը և հեռահաղորդակցման համաշխարհային ցանցերի ստեղծմանը, ինչը իր հերթին նոր հնարավորություններ է ստեղծել հասարակական հարաբերությունների զարգացման համար: Շարադրվածի արդյունքում փոխակերպման է ենթարկվել նաև հասարակությունը, որը ստացել է «տեղեկատվական հասարակություն» անվանումը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման վերաբերյալ խոսելիս, հարկավոր է նշել, որ հեռահաղորդակցման գործընթացում առանցքային նշանակություն ունեն էլեկտրոնային փաստաթղթերը, ինչով և պայմանավորվում են էլեկտրոնային փաստաթղթերի օգտագործման և դեպի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն անցնելու հնարավորությանը վերաբերող հարցերի առավել արդիականացումը: Նշվածը բացատրվում է նրանով, որ հեռահաղորդակցման հնարավորությունը մեծապես իրացվում է հենց էլեկտրոնային փաստաթղթերի (որպես որոշակի տեղեկատվության կրիչի) միջոցով:

Մարդկությունը արդեն վաղուց թևակոխել է տեղեկատվական դարաշրջան, իսկ Հայաստանի Հանրապետությունը հռչակել է մոդերնիզացման գործընթացի սկիզբը, որի հիմնական բաղադրիչ է հանդիսանում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը և էլեկտրոնային փաստաթղթի օգտագործման համար համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծումը: Այդ մասին է վկայում նաև ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 7 արձանագրային որոշումը (այսուհետ՝ Որոշում), համաձայն որի՝ օրենսդրությունը պետք է հիմնարար պատկերացումներ տա տեղեկատվության, էլեկտրոնային փաստաթղթի, թվային ստորագրության, գաղտնիքի, հաշվառման ընթացակարգերի վերաբերյալ, ինչպես նաև՝ պետք է օրենսդրորեն սահմանվեն տեղեկատվության հաշվառման, մշակման, կիրառման, տրամադրման, ինչպես նաև էլեկտրոնային փոխհարաբերությունների կանոնները:

Այնուամենայնիվ, քրեադատավարական իրավահարաբերությունների շրջանակներում տեղեկատվության նշված տեսակի օգտագործման վերաբերյալ հստակ կարգավորումները գրեթե բացակայում են, ինչը ինքնին փաստում է ընտրված թեմայի արդիականության բարձր աստիճանի մասին:

Հաշվի առնելով Որոշման 1.7-րդ կետի պահանջները առ այն, որ էլեկտրոնային փաստաթղթի և տեղեկատվության իրավական կարգավիճակը չպետք է զիջի թղթայինին, էլեկտրոնային փաստաթուղթը անհրաժեշտ ենք համարում դիտարկել, որպես փաստաթղթի տարատեսակ, որը իրավական կարգավիճակի առումով ոչնչով չի զիջում ավանդական փաստաթղթին:

Ելնելով վկայակոչվածից, անհրաժեշտ ենք համարում մինչ սույն գիտական հոդվածի բուն խնդրին անդրադառնալը մեջբերել էլեկտրոնային փաստաթղթի հասկացության հեղինակային սահմանումը, համաձայն որի՝ «*Համակարգչային տեխնիկայի միջոցով ստեղծված ֆայլում արձա-*

նագրված թվային տեղեկատվություն, որը հաստատվում և անհատականացվում է մեկ կամ մի քանի անձանց էլեկտրոնային թվային ստորագրությունների և այլ ռեկվիզիտների միջոցով»:

Վերադառնալով քրեադատավարական ապացուցման գործընթացում փաստաթղթերի օգտագործման հարցին, հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 14-րդ գլխի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ փաստաթղթերը որպես ապացույցների աղբյուր կարող են դիտարկվել հետևյալ երեք դեպքերում[1]՝

1. Որպես քննչական կամ դատական գործողության արձանագրություն (Օրենսգրքի 121-րդ հոդված):

2. Որպես իրեղեն ապացույց՝ այն դեպքերում, երբ փաստաթուղթը հանցագործության գործիք է ծառայել կամ իր վրա հանցագործության հետքեր է պահպանել, կամ հանցավոր գործողությունների օբյեկտ է եղել, կամ կարող է հանցագործությունը հայտնաբերելու, գործի փաստական հանգամանքները պարզելու, մեղավորներին ի հայտ բերելու, մեղադրանքը հերքելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու միջոց (Օրենսգրքի 115 րդ հոդված):

3. Որպես այլ փաստաթուղթ՝ այն դեպքերում, երբ փաստաթուղթը իր մեջ պարունակում է տեղեկություններ, որով կարող են հաստատվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալները (Օրենսգրքի 122-րդ հոդված):

Այսպիսով, սույն հոդվածում կքննարկվի քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային փաստաթղթի, որպես փաստաթղթի տարատեսակի օգտագործման խնդիր, որը համակողմանի քննարկելու համար կվերլուծվեն հետևյալ հարցերը՝

- Էլեկտրոնային փաստաթուղթը «*քննչական և դատական գործողությունների արձանագրության*» դատավարական կարգավիճակում օգտագործելու հնարավորությունը:
- Էլեկտրոնային փաստաթուղթը «*իրեղեն ապացույցի*» դատավարական կարգավիճակում օգտագործելու հնարավորությունը:
- Էլեկտրոնային փաստաթուղթը «*այլ փաստաթղթի*» դատավարական կարգավիճակում օգտագործելու հնարավորությունը:

Էլեկտրոնային փաստաթուղթը քննչական և դատական գործողությունների արձանագրությունների դատավարական ձևի շրջանակներում օգտագործման հնարավորության մասին խոսելիս, հարկ ենք համարում նշել, որ խոսքը վերաբերում է վարույթն իրականացնող մարմնի կողմից կազմվող փաստաթղթերին, որոնք հաստատում են քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից անմիջականորեն ընկալված, քրեական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները: Կարծում ենք, որ ներկայումս դատավարական գործողությունների ընթացքը հնարավոր է, և անհրաժեշտ է ֆիքսել առավելապես տեխնիկական միջոցների գործադրմամբ, այսինքն՝ էլեկտրոնային փաստաթուղթ ստեղծելու եղանակով, այլ ոչ պարզ, գրավոր կազմված փաստաթղթեր ստեղծելու միջոցով:

Պ.Պաստուխովը դոկտորական ատենախոսության մեջ նշում է, որ պետք է վերացնել քննչական գործողության արձանագրությունների մենաշնորհը. ապացույցի այս տեսակը պետք է լինի քննչական գործողության արդյունքների ամրագրման այլընտրանքային միջոց: Քննչական գործողության արձանագրություններից, որպես ապացույցների ամրագրման հիմնական ձևից, աստիճանաբար պետք է անցում կատարել դեպի տեխնիկական միջոցների օգտագործումը՝ տեսաձայնագրում, նկարահանում և այլն[2]: Ա. Կուխտան իրավացիորեն նշում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և էլեկտրոնային կառավարության ստեղծման պայմաններում ապացուցման գործընթացի պարզեցումը և դեֆորմալիզացիան անխուսափելի է: Որպեսզի ապացուցման գործընթացը թղթայինից վերափոխվի ոչ թղթային ձևի՝ պետք է վերանայել հայրենական քրեական դատավարության գիտության հնացած հասկացությունների համակարգը, մասնավորապես՝ անհրաժեշտ է անցում կատարել դատավարության մասնակիցների կողմից տեղեկությունների հավաքագրման նոր տեխնոլոգիաներին[3]:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ միայն էլեկտրոնային փաստաթղթի միջոցով քննչական և դատական գործողությունների արձանագրման հնարավորությունը էապես բարդացված է[4]: Մասնավորապես, խնդիրն այն է, որ քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային փաստաթուղթը հնարավոր է հաստատել միայն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ դատավարական գործողությունների մասնակիցների (ընթերական, վկան, տուժողը, մեղադրյալը, պաշտպանը) կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ էլեկտրոնային փաստաթուղթ հաստատելը միշտ չէ, որ հնարավոր է (գրանցված էլեկտրոնային թվային ստորագրություն չունենալու, այն պարունակող նյութական կրիչի բացակայության կամ այլ պատճառներով): Ն.Ա.Իվանովը քննչական և դատական գործողությունների արձանագրման էլեկտրոնային տարբերակի վերաբերյալ ընդգծել է հետևյալ խնդիրները՝ թվային տարբերակով երկարաժամկետ տեղեկատվության պահպանման անհնարինությունը (օրինակ՝ այս կամ

այն ֆայլի ֆորմատի փոփոխություն, որը հանգեցնում է նախկինում ստեղծված էլեկտրոնային փաստաթուղթը ընթերցելու տեխնիկական անհնարինությանը), քաղաքացիների կողմից էլեկտրոնային ստորագրությունների գրանցման ցածր ցուցանիշը և այլն:

Չնայած նրան, որ շարադրված խնդիրները կրում են կազմակերպատեխնիկական բնույթ, այնուամենայնիվ դրանց առկայությունը գրեթե զրոյացնում է արձանագրման գործընթացը ամբողջովին թվայնացնելու հնարավորությունը:

Ելնելով շարադրված նկատառումից, կարծում ենք, որ նպատակահարմար կլինի տեսաձայնագրման դեպքում զուգահեռ կիրառել թղթային արձանագրման (համառոտագրման) կարգը, որտեղ համառոտ կներկայացվի համապատասխան գործողության կատարման տեղի, ժամանակի, մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև կատարված դատավարական գործողության բովանդակության համառոտագիրը[5]: Ըստ էության առաջարկվում է զուգահեռ կիրառել արձանագրման և էլեկտրոնային, և ավանդական թղթային կարգ:

Այս առումով, անհրաժեշտ ենք համարում նշել, որ Օրենսգրքի 315-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում արձանագրությունը վարվում է դատական նիստի ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով՝ միաժամանակ համառոտագրման միջոցով: Այսինքն, գործող քրեադատավարական օրենսդրության համաձայն սահմանված է քննչական գործողությունների պարզ գրավոր արձանագրման կարգ և դատական գործողությունների ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով միաժամանակ համառոտագրման արձանագրման կարգ: Ստացվում է, որ քննարկվող հարցը արդեն իսկ մասնակիորեն լուծված է և պարզապես առկա է արձանագրման ընդհանուր կարգ սահմանելու անհրաժեշտություն, որը կփոխարինի քննչական գործողությունների պարզ գրավոր եղանակով արձանագրման կարգը, տարածելով դատական գործողությունների արձանագրման համեմատաբար նոր կարգի կիրառման հաջողված պրակտիկան:

Անդրադառնալով իրեղեն ապացույցի դատավարական ձևի շրջանակներում էլեկտրոնային փաստաթղթի օգտագործման հնարավորությանը, նախ, հարկ ենք համարում վերլուծել իրեղեն ապացույցի հատկանիշները, համեմատել այդպիսիք էլեկտրոնային փոաստաթղթի հատիակնիշների հետ և ստուգել դրանց համապատասխանության հարցը:

Ինչպես իրավաբանորեն նշվում է գիտական գրականության մեջ, իրեղեն ապացույցները ***նյութական աշխարհի օբյեկտներ են***, որոնք քննվող հանցագործության դեպքի հետ ունեցած կապի շնորհիվ տեղեկություններ են պարունակում դրա վերաբերյալ: Իրեղեն ապացույցն առավելապես ունի օբյեկտիվ բովանդակություն և այն, ի տարբերություն անձնային ապացույցի, օրինակ՝ ցուցմունքի, զուրկ է սուբյեկտիվ հատկանիշից: Բանն այն է, որ իրեղեն ապացույցը բովանդակում է քրեական վարույթի համար նշանակություն ունեցող տվյալները ***անփոփոխ վիճակում***[6]:

Վ.Ա. Մեշերյակովը նշում է՝ թվային տեղեկատվությանը հիմնական բնորոշ յուրահատկություն է հանդիսանում այն, որ «վիրտուալ հետքերը» ամրագրված են նյութական կրիչի վրա, սակայն ենթակա չեն անմիջական ընկալման[7]: Հարկ է նշել նաև, որ ի տարբերություն իրեղեն ապացույցի, էլեկտրոնային փաստաթուղթը բնութագրող հատկություններից է հեշտ խմբագրումը, կրկնօրինակումը, փոփոխումը, և անգամ ոչնչացումը:

Շարադրվածը փաստում է այն մասին, որ էլեկտրոնային փատաթուղթը թեև կարող է պարունակել հանցագործության հետքեր, ստեղծված լինել հանցավոր գործունեության արդյունքում, հայտնաբերվել դեպքի վայրի զննության ընթացքում մեղադրյալին պատկանող առգրավված առարկաներից, սակայն միանշանակ է, որ էլեկտրոնային փաստաթուղթը ինքնին հանդիսանում է վիրտուալ աշխարհի օբյեկտ, որը ընդամենը արձանագրված է նյութական աշխարհի օբյեկտ հանդիսացող նյութական կրիչի վրա:

Իրեղեն ապացույցի դատավարական ձևի շրջանակներում էլեկտրոնային փաստաթղթի օգտագործման հնարավորության մասին խոսելիս, հարկ ենք համարում անդրադառնալ նաև Վ.Ի.Շիկանովի արտահայտած դիրքորոշմանը, համաձայն որի՝ իրեղեն ապացույցի դատավարական ձևի շրջանակներում չեն կարող օգտագործվել այնպիսի փաստաթղթեր, որոնք ուսումնասիրվում են բովանդակային առումով: Այսինքն, ըստ Շիկանովի՝ իրեղեն ապացույց կարող է հանդիսանալ միայն այնպիսի փաստաթուղթը, որը իր արտաքին ֆիզիկական առանձնահատկություններով է հետաքրքրություն առաջացնում վարույթն իրականացնող մարմնի մոտ, այլ ոչ իր բովանդակային առումով[8]:

Ելնելով վերոգրյալից, կարծում ենք, որ քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային փաստաթուղթը չի կարող ճանաչվել և օգտագործվել որպես իրեղեն ապացույց, քանի որ նրան բնորոշող մի շարք հատկություններ ուղղակի անհամապատասխանության մեջ են մտնում իրեղեն ապացույցին ներկայացվող մի շարք պահանջ-

ներին: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ էլեկտրոնային փաստաթղթի դեպքում վարույթն իրականացնող մարմինը կարող է հետաքրքրված լինել միայն դրա բովանդակային մասով (այն պարզ պատճառով, որ էլեկտրոնային փաստաթուղթը զուրկ է ֆիզիկական հատկություններից), կարծում ենք, որ էլեկտրոնային փաստաթղթի օգտագործումը իրեղեն ապացույցի դատավարական ձևի շրջանակներում a priori անհնար է:

Անդրադառնալով այլ փաստաթղթի դատավարական կարգավիճակում էլեկտրոնային փաստաթուղթը օգտագործելու հնարավորությանը, նախ, հարկ ենք համարում նշել, որ այլ փաստաթղթերը քրեական վարույթի շրջանակներից դուրս ձևավորված, այլ կերպ ասած՝ արտավարութային և օրենքով սահմանված եղանակներով հավաքված փաստաթղթեր են, որոնք պարունակում են քրեական վարույթի համար նշանակություն ունեցող փաստական տվյալներ: Այլ (արտավարութային) փաստաթուղթը կարող է ունենալ տարաբնույթ ձև՝ թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձև:

Հարկ է նշել, որ Ցարական Ռուսաստանի քրեադատավարական գիտության մեջ գերակշիռ դիրք էր զբաղեցնում այն մոտեցումը, համաձայն որի, փաստաթղթերը անհնար է սահմանազատել իրեղեն ապացույցներից, քանի որ դրանք հանդիսանում են նյութական աշխարհի օբյեկտներ: Այդ իսկ պատճառով փաստաթղթերը դիտարկվում էին որպես իրեղեն ապացույցի տարատեսակ:

Ժամանակակից քրեադատավարական գիտական հանրությունը, սակայն, առավելապես կիսում է այն տեսակետը, որ այլ փաստաթուղթը հանդիսանում է ինքնուրույն ապացույցի տեսակ:

Այլ փաստաթղթի անգամ օրենսդրական սահմանման ընթերցումը և դրա համադրումը էլեկտրոնային փաստաթղթի առանձնահատկությունների հետ թույլ է տալիս հանգել այն հետևության, որ էլեկտրոնային փաստաթուղթը կարող է օգտագործվել քրեադատավարական ապացուցման գործընթացում այլ փաստաթղթի դատավարական ձևի շրջանակներում:

Միևնույն ժամանակ, համաձայն առավել տարածված գիտական մոտեցման իրեղեն ապացույցի և այլ փաստաթղթի մրցակցության դեպքում նախապատվությունը տրվում է իրեղեն ապացույցին, այլ կերպ ասած՝ եթե այլ փաստաթուղթը պարունակում է իրեղեն ապացույցի հատկանիշներ, ապա այն ճանաչվում է իրեղեն ապացույց:

Ելնելով վերը շարադրված վերլուծությունից, կարծում ենք, որ էլեկտրոնային փաստաթղթերը անկախ նրանից, թե դրանք պարունակում են իրեղեն ապացույցի հատկանիշներ՝ թե ոչ, պետք է գնահատվեն, որպես այլ փաստաթղթեր, և հետևապես՝ ուսումնասիրվեն այլ փաստաթղթի դատավարական ձևի շրջանակներում:

Այսինքն, քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային փաստաթղթի օգտագործման հնարավորության վերաբերյալ կարելի է հանգել հետևյալ եզրահանգումների՝

1.Դատավարական գործողությունների արձանագրման ամբողջական թվայնացումը ներկայումս անհնար է, սակայն արձանագրման գործընթացում էլեկտրոնային փաստաթղթի կիրառումը հնարավոր է պարզ թղթային արձանագրման գործընթացի պարզեցմամբ, այն է՝ համառոտ թղթային արձանագրություն կազմելուն զուգահեռ:

2.Միևնույն ժամանակ, կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային փաստաթուղթը կարող է և պետք է օգտագործվի քրեադատավարական ապացուցման գործընթացում այլ փաստաթղթի դատավարական ձևի շրջանակներում և չի կարող օգտագործվել իրեղեն ապացույցի դատավարական ձևի շրջանակներում:

[1] Տե՛ս, Кукарникова Т.Э. Особенности электронного документа как источника доказательств // Воронежские криминалистические чтения. 2003. Выпуск 4. С. 205-206.

[2] Տե՛ս, Пастухов П.С. Модернизация уголовно-процессуального доказывания в условиях информационного общества. Автореф. дисс. … д-ра юрид. наук. М.: 2015. С. 25.

[3] Տե՛ս, Кухта А.А. Доказывание истины в уголовном процессе. Автореф. дисс. … д-ра юрид. наук. Н. Новгород, 2010. С.13.

[4] Տե՛ս, Полякова Т.А. Вопросы создания правовых условий внедрения электронного документооборота и использования электронных документов в качестве доказательств // Человек: преступление и наказание. 2008. N 1. С 26-28.

[5] Տե՛ս, Ղամբարյան Ա., Հարությունյան Զ. «Տեղեկատվական հասարակությունում հարցաքննությունը էլեկտրոնային եղանակով արձանագրելը»: «Դատական Իշխանություն» N 3/213, 2017թ., էջ 68-74:
[6] Տե՛ս, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, Հեղ.խումբ: Գիտ. խմբ. Ա.Ղամբարյան, Եր.: Տիգրան Մեծ, 2016: Էջ 416:
[7] Տե՛ս, Мещеряков В.А. Преступления в сфере компьютерной информации: правовой и криминалистический анализ. - Воронеж: ВГУ, 2001. С. 74-76.
[8] Տե՛ս, Шиканов В.И. Актуальные вопросы уголовного судопроизводства и криминалистики в условиях современного научно-технического прогресса. - Иркутск: Восточно-сибирское кн. из-во 1978. С. 191

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Кукарникова Т.Э. Особенности электронного документа как источника доказательств // Воронежские криминалистические чтения. 2003. Выпуск 4.
2. Пастухов П.С. Модернизация уголовно-процессуального доказывания в условиях информационного общества. Автореф. дисс. … д-ра юрид. наук. М.: 2015.
3. Кухта А.А. Доказывание истины в уголовном процессе. Автореф. дисс. д-ра юрид. наук. Н. Новгород, 2010.
4. Полякова Т.А. Вопросы создания правовых условий внедрения электронного документооборота и использования электронных документов в качестве доказательств // Человек: преступление и наказание. 2008. N 1.
5. Ղամբարյան Ա., Հարությունյան Զ. «Տեղեկատվական հասարակությունում հարցաքննությունը էլեկտրոնային եղանակով արձանագրելը»: «Դատական Իշխանություն» N3/213, 2017թ.: Էջ 68-74:
6. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, Հեղ.խումբ: Գիտ.խմբ. Ա.Ղամբարյան, Եր.: Տիգրան Մեծ, 2016:
7. Мещеряков В.А. Преступления в сфере компьютерной информации: правовой и криминалистический анализ. - Воронеж: ВГУ, 2001.
8. Шиканов В.И. Актуальные вопросы уголовного судопроизводства и криминалистики в условиях современного научно-технического прогресса. - Иркутск: Восточно-сибирское кн. из-во 1978.

Зорайр Арутюнян
Член палаты адвокатов Республики Армения,
соискатель кафедры уголовного и уголовно-процессуального
права института права и политики Российско-Армянского (Славянского) университета

РЕЗЮМЕ

Электронный документ в системе видов уголовно-процессуальных доказательств

Электронный документ имеет ключевое значение в процессе коммуникации. В рамках данной научной работы будут рассмотрены основные проблемные вопросы относительно места электронного документа в системе видов уголовно-процессуальных доказательств. В объеме данной работы включен сравнительный анализ возможности использования электронных документов и традиционных документов в уголовно-процессуальном доказывании.

Ключевые слова: *электронный документ, протоколирование, вещественное доказательство, иной документ.*

Zorayr Harutyunyan
Member of the chamber of advocates of the Republic of Armenia,
Applicant of the department of the criminal and criminal procedural
law of the Institute of Law and Politics Russian-Armenian (Slavonic) University

SUMMARY

Electronic documents in the system of types of criminal procedural evidences

Electronic documents are crucial for the communication process nowadays. In the current scientific work the main issues relating to the place of the electronic document in the system of evidences will be discussed. Comparative analysis of the possibilities of use of the electronic documents and traditional documents during the criminal procedural proof process is also presented in the work.

Keywords: *electronic document, record-keeping, material evidence, other document.*